ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1.«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերնագրում «ԱՄԱՌԱՅԻՆ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «(ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ)» բառերը, իսկ «ՁՄԵՌԱՅԻՆ» բառից հետո լրացնել՝ «(ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ)» բառերը՝ նկատի ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի և նախագծի 1-ին կետի պահանջները:

2.Նախագծի հավելվածի անվանումից անհրաժեշտ է հանել «ՆԱԽԱԳԻԾ» բառը:

3.Նախագծի հավելվածի 4-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե որ մարմինն է ներկայացնում եզրակացություն և որը՝ կարծիք:

4.Նախագծի հավելվածի 5-րդ կետում անհրաժեշտ է պարզաբանել, թե քաղաքաշինական իրավիճակի փոփոխության դեպքում ինչ փաստատեղթեր են

ներկայացվելու, մասնավորապես, արդյոք ներկայացվելու են հավելվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը:

5. Նախագծի հավելվածի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշվում է դիմումը մերժելու հիմքերը, մասնավորապես, եթե 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի կամ փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին:

Այդ առումով հարկ է նկատի ունենալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում վարչական մարմինը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ, ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները:

Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու սույն մասում նշված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:

Վերոգրյալի համատեքստում նախագիծն անհրաժեշտ է խմբագրել:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

5/15/2025

X

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: KARAPETYAN MARGARITA 5111830715

Մ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ